Հավելված թիվ 8՝
ՀՀ փաստաբանների պալատի նախագահի
30.03.2021թ. թիվ 62-Լ որոշման

Կարգապահական գործ թիվ ԿԳ-_____

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
----------թվականի ----------ի թիվ ---------- նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ------Ա
ՓԱՍՏԱԲԱՆ ----------ԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ, նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ, նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ ----------ի, Խորհրդի անդամներ՝ ----------կազմով,

քարտուղարությամբ՝ ----------ի,

քննության առնելով փաստաբան ----------ին (արտոնագիր թիվ ------) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին ----------թ. տրամադրված ------ տեղեկանքի փաստաբան ----------ն ունի ---------- ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ ---------թ. ----------ից մինչև ----------թ. ---------- ամիսների համար:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

----------թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ -------- որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան ----------ի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1 ենթակետի խախտման հատկանիշներով:

----------թ.-ին կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել ----------թվականի ----------ին, ժամը՝ -----ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

** Նշվում է պատասխանողի համառոտ բացատրությունները և բացատրությունները տալու ամսաթիվը, եթե այդպիսին կա: Եթե բացատրություն չի տվել, ապա նշվում է, որ որևէ բացատրություն չի ներկայացվել պատասխանողի կողմից:*

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 3.10.3 ենթակետի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

** հերթականությամբ նշվում են կարգապահական գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը և այդ փաստը հաստատող կամ ժխտող ապացույցը:*

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

** Նշվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն փաստաբանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթների առկայության կամ բացակայության մասին:*

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան ---------- ----------ին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության (կամ վարույթը կարճել), հետևյալ պատճառաբանությամբ.

** Նշվում են հիմնավորումները:*

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի .... հոդվածի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության .....կետի , «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի ..... կետի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

Ա.Պատասխանատվության ենթարկելու դեպքում՝

1. ***Փաստաբան ----------ին (արտոնագիր թիվ ----------) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի պահանջների խախտման համար:***

2. ***Փաստաբան ----------ի (արտոնագիր թիվ ----------) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ .....*** *(* նշվում է տույժի տեսակը):*

3. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան ----------ին և դիմողին:***

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

Նիստը նախագահող՝ ----------

Բ.Կարճելու դեպքում՝

1. ***ՀՀ փաստաբանների պալատի նախագահի ... թվականի .... որոշմամբ փաստաբան ----------ի (արտոնագիր թիվ ----------) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ .....*** *(* նշվում է կարճման հիմքը):*

2. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան ----------ին:***

Նիստը նախագահող՝ ----------